# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, h. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

N Ե- 01/83

«22» Մարտի 2021թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 22-ի թիվ 04-Ա, 05-Ն և 06-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե ի. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» Մարտի 2021 թվականի N 04-Ա

## ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 22-ի հերթական նիստի օրակարգը:

1. Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 22-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 25-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ. Մարտիի 22
ի. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» Մարտի 2021 թվականի N 05-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, « Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբեր 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին» N 28-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ համաձայն կից 1, 2, 3, 4, 5, 6 հավելվածների:

Կողմ ( 5 )    Դեմ (0)    Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ. Մարտիի 22
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«22» Մարտի 2021 թվականի N 06-Ա

## ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով , Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածով հիմք ընդունելով «Ձորագետ Հիդրո» ՍՊԸ-ի 2021թվականի մարտի 12–ի թիվ Ե-12/03-01 գրությունը և տնօրենների խորհրդի 2021թվականի փետրվարի 22-ի N 28 արձանագրության քաղվածքը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2218342 վկայականը՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

1. Թույլատրել որպես նվիրատվություն ընդունել Ձորագետ համայնքի վարչական տարածքում գտնվող «Ձորագետ Հիդրո» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզ, գ. Ձորագետ, 1 փողոց, 80 շենք հասցեում գտնվող անշարժ գույքը՝ բնակելի շենքը 1456,3քմ. մակերեսով, և դրանով զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը և որպես համայնքային սեփականություն ամրացնել Ձորագետ համայնքին:
2. Ձորագետ համայնքի ղեկավարին՝ «Ձորագետ Հիդրո » ՍՊԸ-ի հետ կնքել նվիրատվության պայմանագիր
3.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել «Ձորագետ Հիդրո » ՍՊԸ-ի միջոցների հաշվին:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ. Մարտիի 22
հ. Ձորագետ